«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2025-2026
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (6-րդ դասարան)

Անուն Հայրանուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...

Եղիշե Չարենց

Սիրելի՛ բարեկամ, կարդա այս գրվածքը, որի հեղինակը ժամանակակից գրող Արսեն Համբարյանն է:

Ամպն ու Եսասարը

Մի շոգ տարի Եսասարը բռնում է Ամպի պոչից և բաց չի թողնում: Ամպն ասում է.

–Ա՜յ տղա, թող գնամ, խաղ անելու ժամանակը չէ. արտերս խանձվում են, անտառներս՝ հրդեհվում:

Սարն էլ թե.

–Չէ՛, ինչի՞ս են քո արտերն ու անտառները, մնա՛, ի՛նձ հովացրու,– ու Ամպին բաց չի թողնում:

Գնալով՝ Ամպը մեծանում է սարի գլխին, մինչդեռ շուրջբոլորն արդեն կրակի մեջ է: Մուխն ու ծուխը պատում են սարը: Եսասարը, տեսնելով, որ խեղդվում է, ասում է.

–Ա՛մպ, հեռացի՛ր, խնդրում եմ, բավական է, գնա՛, մի քիչ էլ արտ ու անտառները զովացրո՛ւ. մեղք են, քեզ են սպասում:

Ամպն էլ թե.

–Լավ է՝ հիշեցիր. արտ ու անտառ մնա՞ց, որ հովացնեմ: Չէ՛, հիմա էլ ես չեմ գնում, խեղդվի՛ր, քեզ տեղն է:

Եվ սարն այնքան է շիկանում, որ հրաբուխ է ժայթքում: Ամպը պատռվում է, ցրվում սարի չորսբոլորը և լիահորդ անձրև է թափում, հանգցնում արտերի և անտառների հրդեհները: Ու միայն Եսասարն է վառվում սև մուժի մեջ, և կրակ ու լավա է թքում ինքն իր երեսին:

Կատարի՛ր առաջադրանքները:

1. Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է տրված: Կարծիքդ հիմնավորի՛ր (5 միավոր):

_____

_____

_____

_____

_____

_____

_____

2. Ի՞նչ ես կարծում՝ ինչո՛ւ է հեղինակը սարին այդ անունը տվել (5 միավոր):

_____

_____

_____

_____

_____

_____

_____

3. ԵՍ արմատով հնարավորինս շատ բառե՛ր հիշիր և գրի՛ր (5 միավոր):

Ես

_____

_____

_____

_____

_____

_____

4.Ո՞ր բառերում են թաքնված կրակ բառի հոմանիշը, դո՛ւրս գրիր դրանք, առանձնացրո՛ւ արմատները (5 միավոր):

5.Ո՞ր բառերում են թաքնված շոգ բառի հականիշները, դո՛ւրս գրիր դրանք, առանձնացրո՛ւ արմատները (5 միավոր):

---

6. Տեքստում բառեր կան, որոնք կարող ես գրել ամեն մի շարքի կողքին, դո՛ւրս գրիր դրանք համապատասխան տողում (5 միավոր):

Ագի, ձետ, գես----------

Մառախուղ, շամանդաղ, բալ ----------

Կարմրատակել, ջեռանալ, կեծանալ----------

Տեղատարափ, առատաջուր, ջրառատ----------

Բխել, ցայտել, արտավիժել----------

7. Տեքստից դո՛ւրս գրիր արմատ+ա+արմատ կամ արմատ+արմատ կազմությամբ հինգ բառ, վերլուծի՛ր բառակազմորեն (5 միավոր):

_____
_____
_____
_____
_____

8. Շարադրի՛ր էս կարծիքը, տեսակետը Եսասարը հիշեցնող մարդկանց արարքների մասին: Անպայման երկու օրինա՛կ բեր կա՛մ կյանքից, կա՛մ կարդացածդ գրքերից, կա՛մ դիտածդ կինոնկարներից (10 միավոր):

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____